

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

### ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի նոյեմբերի 23-ին կայացած Գիտական Խորհրդի N4 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 34-ը (ցուցակը կցվում է), նիստին մասնակցում էր նաև ԵՊՀ ռեկտոր պրն. Ա.Հ.Սիմոնյանը

#### Օրակարգ

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2016-2017 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

/զեկ. Մ.Ա.Գրիգորյան/

Նիստը դեկավարելու համար առաջարկվեց դոց.Ս.Ռ.Սուվարյանի թեկնածությունը:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

**ԼՍԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաշվետվությունը մեկ տարում կատարած աշխատանքի վերաբերյալ (զեկուցումը կցվում է):

Հաշվետվությունն ավարտելուց հետո դեկան *Մ.Գրիգորյանը* պատասխանեց տրված բոլոր հարցերին:

#### *ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝*

**Պ.Գ.Դավթյանը.** Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Պ.Դավթյանը նշեց, որ զեկուցված հաշվետվությունը իր մեջ ներառել էր ֆակուլտետում հսկայածավալ աշխատանքի միայն որոշ հատված: Ստեղծված են նորմալ պայմաններ թե՛ գիտական և թե՛ ուսումնական գործընթացներն ապահովելու համար: Գրիգորյանի ջանքերն ուղղված են երիտասարդ կադրերով համալրելուն: Ինտենսիվ աշխատում է խմբագրական կոլլեգիան:

**Թ.Գ.Վարդանյան.** Առաջարկում էմ դեկանի 2016-2017 ուս.տարում կատարած աշխատանքը գնահատել բավարար: Խոսքի սկզբում Թ.Վարդանյանը նշեց, որ ցանկացած

աշխատանքային գործընթացներում կան և բացթողումներ և ձեռքբերումներ: Ֆակուլտետում մեթոդ խորհրդի բոլոր նիստերում պահպանվել է գիտական որակը զարգացնելու աշխատանքը:

**Ա.Հ.Պոստոյան.** Առաջարկում եմ «լավ» գնահատել այն բարդ գործի համար, որը, կարծում եմ, հաջողվել է Մ.Ա.Գրիգորյանին: Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հարցում ֆակուլտետում որևէ խոչընդոտ չկա:

**Հ.Բ.Մովսիսյան.** Բարձր գնահատելով և կարևորելով դեկանի դեկանատի և ամբիոնների կողմից կատարած աշխատանքներն առաջարկեց գնահատել բավարար: Մովսիսյանն իր խոսքում հրավիրեց ուշադրությունը աշխատակիցների սոց. խնդիրների և “շրջանավարտ-դիմորդ” քանակի նվազման խնդրին: Առաջարկեց բնագիտական թևին դոտացիաներ հատկացնել:

**Ռ.Ս.Մովսեսյանը.** Առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել դրական: Ռ.Ս.Մովսեսյանն իր խոսքում նշեց դեկանի հետ երկար տարիների աշխատանքային ճանապարհ են անցել և առանձնացրեց Մ.Գրիգորյանի՝ որպես դեկավարի, խմորումներից ճիշտ դուրս գալու ունակությունը: Մ.Գրիգորյանը կարողանում է ֆակուլտետի “կլիման” բերել հավասարակշիռ վիճակի:

**Մ.Գ.Մանասյան.** Բազմիցս ասել եմ որ Մ.Գրիգորյանը լավ «մենեջեր» է: Կոչ արեց երեխաներին հաշվեհարդար չտեսնելու: Ստիպված եմ ասելու որ մեր խորհուրդը որը հաշվեհարդար է տեսնում իրեն սպառել է: Չկա Բանավեճի մթնոլորտը: Գտնում եմ, որ աշխատանք տարված է սակայն կան նաև բավականին շատ բացթողումներ և թերություններ:

**Ա.Թ.Գրիգորյան.** պ-ն Մ.Ա.Գրիգորյանը ղեկավարում է մոտ 1400 հոգանոց կոլեկտիվը: Մեր ուսանողները 100ավոր անգամ արտահայտել են իրենց կարծիքը ուսանողների խնդիրները լուծելու Մ.Ա.Գրիգորյանի կարողությունը: Պահում է կենտրոնաձիգ ուժը, այդ է պատճառը, որ չափազանց հեշտ է աշխատել և միևնույն ժամանակ շատ դժվար: Գնահատելով արժանիքներն ու կատարված դրական աշխատանքը առաջարկում են գնահատել բավարար:

**ՌուԳԸ նախագահ Ա.ՀԱկոբյան.** Բարձր գնահատեց դեկանի կատարած աշխատանքը, ուսնողին լսելու պատրաստականությունը, շեշտեց ղեկավարների պատրաստականությունը

գիտաժողովների և ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործում:

**Ս.Ռ.Սուվարյան.** Աառաջարկում եմ դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար: Հեշտ է խոցել և վիրավորել մարդու անձը, շատ ավելի դժվար է խոսել մարդու կատարած աշխատանքների վերաբերյալ: Դեկանի կատարած աշխատանքը գնահատելուց պետք է հիշենք բարոյահոգեբանական վիճակը նախքան ֆակուլտետների միավորումը և դրանից հետո: Ունենք Օբյեկտիվ արդյունքներ այս ամենը դեկն Մ.Գրիգորյանի աշխատանքի արդյունք է:

**Սահմանափակելով ելույթները**

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** դեկան Մ.Ա.Գրիգորյանի կողմից ֆակուլտետում կատարած աշխատանքը համարել բավարար

**Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-33, ՁԵՌՆՊԱՀ -1, ԴԵՄ-0**

**ՈՐՈՇԵՑԻՆ.** դեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացված հաշվետվությունը և մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատել բավարար:

ԵՊՀ ռեկտոր Ա.Հ.Սիմոնյանը նույնպես դրական գնահատեց հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում դեկանի կատարած աշխատանքը:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**